Մագաղաթեայ հին գրչագրի մի մէջ գտնումենք հետևեալ զուարճալի յօդուածները։

ԲԱՆ ՊԻՏԱՆԻ ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՅԻ։

Ի՞նչ լոյս և լոյս, զի՞նչ լոյս և անլոյս, զի՞նչ դարձեալ խաւար, և խաւար՝ զի՞նչ խաւար՝ և անխաւար, իմաստութիւն և գործ, տեսութիւն՝ առանց կրթութեան, մարմին և թմբրութիւն եղելոցս իրացս գիտութիւն և առանց բայի։ Զի՞նչ երկիր յերկիր. և զինչ առանց երկիրի յաներկիր։ Զի՞նչ երկնութիւն անպատուեալ. և զի՞նչ ի միջնոցին երկիր գոլեալ։

Խոնարհ ենթակայ՝ ի հեզ գործօնեայ. չար՝ բարի խօսել ոչ կարէ, յերվեստիմաէպեր, պղտորէ և ոչ իմաստուն, պատահելոյն հանգէպ անգործ, և զընդէմն ի բնութիւն, եղեռնագործին պատշաճի ուշիմ և ստէպ գալ վկայք։ Դուք էք լոյս աշխարհի, խաւար և լոյս կերպարանի, թէ լոյսդ որ առ քեզ է խաւար է, խաւարն որքան, ժողովուրդն որ նստէր ի խաւարի, ետես լոյս մեծ։ Մեղաւոր եմ ի բաց գնա՛ յինէն, և ժողովեցին զբարի բարին յամանս, և զիստանն ոչ, կալեալ զնա խեղդէր զհարոյրն պահանջել, մեղայ, զի մատնեցի, և ելեալ ելաց դառնապէս։

Ա՛ՅԼ ԻՆՉ ԳՐԻԳՈՐԻ։

Տեսակք իմաստից գիտութեան, թէ յորքանս բաժանին մասունք, կերպարանի խոհական գոլելեացն, և պարսաւելեացն, ի քառեակս յայսոսիկ նշանակեալ տառ, քանզի են ոմանք կատարեալք, որ գիտեն յանձինս իւրեանց զինքեանց թէ գիտեն,

և գիտեն ճշմարտիւ, և զի գիտեն՝ վասն այնորիկ գիտեն թէ ոչ գիտեն։ Եւ արդ այս է գովելի կատարեալ գիտութիւնն։

Իսկ այլ ոմանք իցեն, որք գիտեն թէ գիտեն, և զի գիտեն զորս գիտեն, այս մասնէ գոլով միջնաշաւիղ գովելեացն և պարսաւելեացն։

Եւ դարձեալ այլք ոմանք իցեն, զի ոչ գիտեն, և գիտեն զի ոչ գիտեն, և զի ոչ գիտեն, վասն այնորիկ գիտեն թէ ոչ գիտեն, զի թէ ոչ գիտեն, նոյնպէս և այս արտաքոյ աղարտելոյ է, զի ծանեաւ զիւրն զգիտութիւն հաւաստեաւ։

Իսկ այլք ոմանք իցեն դարձեալ՝ որք ոչ գիտեն և ինքեանք գիտեն թէ գիտեն և ոչ գիտեն, և զի ոչ գիտեն՝ վասն այնորիկ գիտեն թէ գիտեն զի ոչ գիտեն, այս կարի չար պարսաւանաց արժանաւոր է, յայսոսիկ բաժանին գիտութիւն մարդկան։

Բանք ըղձական մտաց, ահա ապաշաւ որդի, անկատար մնացեալ ի ժամու, վասնորոյ այրիմ խորոլեալ և ոչ թուլանիմ կատարեալ։

Գանձու իմաստութեան, ոչինչ զուգան բնաւ յէիր, վասն զի բաժանի ի մասունս յեղանակեալ, է որ յաղագս Աստուծոյ՝ և կամ վասն բնութեան առ ընտանիս, այլ և սակս կրից առ վշտացեալս։

Դարձեալ և յաղագս մարդկայնոյս փոխադարձ բարեաց, իսկ ներհակն ընդդէմ նմին, ի կամայ և յակամայ, և հաւասարս, կամայն դարձեալ յայլասեռս։ Վասն փառաց առ գովիչս՝ և ցանկութիւն առ ստորակայս, և ագահութեան ակնկալութիւն առաւելագունին, նա՝ և ակամայն ի զոյգս, որ է բնութեանն յանիրաւաց, և սղալանաց անձին, և տուգանս և գրաւումն յերաշխիս և որ ի կարգս մին՝ այլ և հաւասարն կրկին ըստ միջակութեան կամայի և ակամայի, որ սակս ապագայից տուժիցն երկիղի, և որ ի լրումն ըղձից։ Իսկ բարոյ էին փոփոխումն յանբարիս, մահ ապականութիւն, այլայլութիւն՝ քակտումն, խզումն և որ նման սոցին։

Բայց դու իմա՛, պատանի և համբակ պատուական ինձ քան

զբնաւս, ծանիր զամենայն առաքինութիւն երկուց չարաց միջակ է յաւէտ գերազանցութեանն, ի պակասութենէ, և կամ զխորագիտութիւն իմաստնոյն խառնել ընդ պարզամտութիւն կենդանոյն, քանզի օշինգր բնաւին դառնագոյն, իսկ մեղու խառնեալ է ամոքիչ, որ զառ ի վեր սկսողացն ելիւք ոմամբք է զանազանեալ, ոչ ի կատարն դնել զիմն, զի մի միշտ ի խոնարհ կայցէ ապա թէ այս բարի, թեթև սկի ընթանալ զի հասանիցէ, ինձ թուի, թէ ըստ բանականի և տվելոյդ ի վերուստ կարող էք իմանալ և զմեզ յիշել ի բարին։

Ինչպէս վերջին խօսքերից երևում է, գրուած է աշակերտի համար. թէև զուարճալի, սակայն անշուշտ դորա վրայ մտածող համբակների գլխին բեկումն կլինի պատճառած, բայց գրողը խիստ սիրով է վերաբերում դէպի վերջինները և այդ պատմական նշանակութիւն ունի, միայն յիշելով այս դարի «վարժապետ»ների ոյժերի քաջագործական փորձերը պատանիների վրայ, այլ և որ այժմն է։ Որքան քաղցր է հնչում և բազմաբովանդակ. «Պատանի և համբակ՝ պատուական ինձ քան զբնաւս»։

Ա. Տ. ՄԻՔԵԵԼԵԱՆ